

յառաջ տարել են Զատիկը, ի Մաղկաղարդի կիւ-
րակէն, հակառակելով Քրիստոսի. « Զի աղանդ
փիլիսոփայիցն հակառակամարտ է Հոգւոյն սըր-
բոյ » :

Յոյն Յայսմաւուրքին յիշատակարանէն այս կը
հետեւի, որ ի Սուտաղ բնակելոց Հայկազանց թիւը
շատուոր եղած պէտք է լինի, որպէս զի նոցա կար-
ծեցեալ սխալմունքին վերայ ուշ դարձնեն միւս
այլ որթոտորքս քաղաքացիք: Թերեւս նոցա մոլորու-
թեան միւս պատճառ ևս այս կը համարին զիրենք
յանդիմանողք, զի նոքա սկսել էին մերձենալ կա-
թոլիկ Հռովմէական եկեղեցւոյն, ինչպէս արդէն
նոցա եղբարք, որք ի վաղուց կը բնակէին Աաֆայի
մէջ: Վասն զի այն քաղաքին մէջ, ըստ կարգա-
գրութեան (règlement) 1316 ին հին հայ եկեղե-
ցիք կային. յորոց մին խարխուլ վիճակի մէջ, թե-
մին արքեպիսկոպոսը յորում կը գտնուէր խարխուլ
եկեղեցին արդէն ընդունած էր զգերագահութիւն
սրբազանին Հռովմայ¹:

Հաւանական է որ՝ Սուղայա (Սուտաղ) ևս ու-
նեցել է իւր Հայ — կաթոլիկ թեմակալ եպիսկոպոսը
1253 ին, որոյ մօտ հիւրընկալ մեծարանք վայելեր
է փրանկ քարոզիչը Rubriques, զոր ինքը յոյն կը
կարծէ. մեզ հաւանական չիթուիր, որ յոյն եկե-
ղեցական մի իւր եկեղեցւոյն² մօտ բնակութիւն
տայ փրանկ քարոզչին:

Բազմահմուտն իւրգեւիչ և Փիլ. Բրիւն, վերը
գրած փաստերով կը հաստատեն որ Հայք ԺՂ դա-

1. Rainaldi, ad annum 1318. n. 13; 1321, n. 13.

2. Այդ ԺԳ դարէն ձապեալ եկեղեցին նորոգեցաւ 1885ին,
յորում այժմ Հայ կաթոլիկք կը պատարագեն: